

բողացան համոզուիլ Քաղկեդնի ուղղափառութեան; Եւ որպէս զի զամէնը հաճէին, այս տարօրինակ պայմանը զրին. Եթէ որ «զիազկեռոնի սուրբ ժողով» և անոր հետեւող հինգերորդ ու վեցերորդ տիեզերականները համաձայն զիտէ ս. Գըրոց ու նախկին ժողովոց, և «յանդինիցի նզովել կամ զրպարտել ընդ պղծոյն նեստորի համաձայնեալ, այնպիսին նզովեալ եղիցի». իսկ ով որ նոյն ժողովը հակառակ զիտէ նախորդաց, և «վասն մարդահանութեան և կամ վասն ընշասիրութեան զնա ոչ նզովէ, նզովեալ եղիցի»: Այս ամէնը կը կարդանք Շիրակուանի ժողովին արձանագրութեանց մէջ¹: Եւ Տէր Միքելիան՝ որ մէկ գունով ներկեց մեր բոլոր հայրապետները, և իրեն հետ երդուացիներէն զոմանս ալ թիւրեցուց յաճախ, Զաքարիայի գործոց վրայէն թշչելով անցաւ:

9. Անոր յաջորդը Գէորգ Բ գառնեցի (878-897) հակացաղկեղոն էր: Մարենոցաց ուխտին հայրը Մաշտոց, յետոյ կաթողիկոս, նամակ մ'ունի առ Արատ պարապետ, յորում կ'ամբաստանէ ինց զինըը՝ թէ «վրիտեցայ, և ըստ արտուղի անկեալ՝ ինքնանբաման բարձի վիտրոց առըրք հարցն՝ որ ի մէջ մեր և քաղկեդոնականացն», որոյ համար կը նզովուի Գէորգէ և յետս կոչում կ'ընէ²: Յօթն ամիս միայն տեղ այս ծերունի վանականին հայրապետութիւնը, ներքին համոզմամբ քաղկեդոնիկ և արտացուած հակառակ, և տեղն անցաւ Յովհաննէս դրասի կերպացին (899-931), ջերմ հակացաղկեղոն մը, ինչպէս յայտնի է իւր շարադրած պատմութենին: Ազգին և իւր կրած տառապանցներն Արարաց ձեռքէն՝ յետոյ ամորեցին զինըը. Կարոստացաւ ու դիմեց թիւզանդիսնի օգնութեան՝ զողոմիշ նամակով մը, յորում կը քաղձայ «Հանդիպման աստուածակարգ թագաւորացդ, և անճուկ յոյժ ունիմ, կ'ըսէ, ի բաղում ամաց գալ առ ձեզ»: Բայց ապա կ'ակնածէ անձամբ

1. q_{F_1} . p. 764 & 320 U. Q_{F_1} . — 2. B_4 . $4F_2$.
188-89. — 3. S_{F_1} . 852, 857.

երթալ կայսեր հրատիրին, «զմտաւ ածեալ՝ թէ գուցէ գտցի ու ե ընդ ակամք հայեցի, զանդ երթալն իմ ի ցաղկեղոնիւտան յարակցել ինձ համարեալ»։ Յաջորդաց՝ Ստեփանոսի, Թէկոդորոսի ու Եղիշէի կրօնական ցաղաքականութեան մասին Կը լուէ իրենց մերձաւորագոյն պատմիչն Ասովկի, ապով իսկ հաստատելով անոնց խաղաղաւոր գարշութիւնը, որով այդ բըջանին (931-943) ցաղկեղոնական հոսանքը Կը զօրանայ Հայոց մէջ։

(Շաբութակելի)

Հ. Վ. Հաջործի

Պ. Հ Բ. Ա Ճ Ա Ռ Ե Ա Ն Ի Մ Է Կ Ն Ո Ր Ս Խ Ա Լ Ը

Ապահովացնելու մասին օրենքը Ապահովացնելու մասին օրենքը:

Արմատական Բառարանին առաջին հասողը
(Ա. Կ. Բ.), Քերչավակն էլած է: Մտադրի էնիք զայն
գրախօնականով մ'ողջունելու, սակայն զրին
վիճատակ վիճակը՝ ընթեցումը յոյժ գուարին
և յանձնեցուցիչ կը դարնէ, որով մեր բարի
տրամադրութեան ալ՝ առ այժմ բոլորին կը
մզգանայ, մինչև կ աւելի զեղեցիկ և ըն-
թեռնութիւն, գուցէ հ աւելի պրագպուած ապագու-
թեամբ մը լցու տեսնէ. փափ որ քանի մը գո-
վեսուր կամ պարսսաւ անպայման անոր ծանօ-
թութիւնը կը պահանջէ:

Զայս թղթատելով՝ տեսա որ հեղինակը միայն արմատներով չէ որ կը զբաղի, հապա երբեմն կը ջանայ նաև քերականական վճռներ ևս տալ: Եւ ահա ասոր մէջ է որ ինձ համարձակութիւն կու տայ դիտողութիւն մ'ընելու:

Աստուած բարին նկատմամբ գրած յօդուա-
ծին մէջ (էլ Ե71-81), զիսելու երկու կէտ կը
գտնեմ. Կախ՝ տուած ստուգաբանութեան մա-
սին, և երկրորդ՝ անոր հոլովման։

Նկ4. Մատի յայտնած պարզաբն կարծիքը, հայ բանասէրն իբրև ստոյգ կ'ընդգրիկէ, և զը գրէ թէ մեր Աստուած բան յանչ կու զայ Փոխացաց Տեմնաւու կամ Տաճնաւու մն, բառնէն Յունական բառի մեր Աստուած բառէն տարբերակի թիւն շատ յայտնի է. մէջը զի պակսին Ա և Տ գրներ, որը մեր լեզունքն ուղի խրն-

գրական բառը կազմելու անհրաժեշտ են: Եթե զուարանօքէն խօսելով՝ ձայնաւոր կամ բաղադայն գրի մը, իր լծորդին հետ փոխանակուիլն՝ ոչ ոք կը մերժէ, բայց բոլորվին անհետանալն՝ տրամարանորդն՝ կարելի չէ ընդունիլ: Ծածիս կ'երջիսաւորէն բոլոր յունարէն ֆերականութիւնի, մանաւանդ այն մասին մէջ՝ որ ճայնաւոր ու բաղադայն տաղից փոփոխմանց՝ մանարամասն և ամենայստապ կանոններ կ'աւանդուին: Նոյնպէս, հաւանական չեն թուիր սա միւս հարցութենք ու ենթադրութիւններ. և Արդեօք յարեթական չէ» (Աստուած բառը), որ յետոյ փոխագիտ ե այն տեղից էլ թրակիա է անցել. հայերենի մէջ ց ձայնը... յետոյ (է) աւելացած, հին արմատական մէկը՝ ԱՍՎԱՌ» կը համարի: Բառ մը, մանաւանդ մարդկային կենաքի մէջ այս գարենոր, այսպան սրբազն և գործածուած բառ, չի կրնար այլպիսի ճամբորդութիւններ կատարել, և այսչափ աղաւաղուիլ: Թող որ հայկական ու փրկարակն բանքը, Աստուած և Խապատ, իրարու հետ ամենին նմանութիւն չունին: Ուստի, աւելի լաւ կը թուի նամինեաց (Անձնացոյն, Նարեկացոյն, Լամբրոնացոյն, Հայկազեանին ևն) տուած սոսպաքանութիւններ. սակայն և այնպէս ինդիրը թողոնք հմտագունից ուսումնասիրութեան և լաւազայն լուծաման:

Բայց շատ աւելի հետաքրքրական է սոյն բառի հուղման նկատմամբ Պ. Անառենի տուած վճռոց: Հակառակ բոլոր հայ մատենագրութեան և մինչև ցայսօր եղած հրատարակութեանց, կը ուրվեցն նա՝ թէ Աստուած բառին սես. հուզվը Աստուածոյ է և որ Աստուածոյ: Հ. Առ. Բագրատունոյն և անոր նման ուրիշ հոյակապ հայկարաններու աստուածոյ և աստուածոյ մըջն զրած տարբերութիւնը՝ «սիսա է», կ'սոէ, (էջ 571). Այս վճիրը տալու թիւնու իրաւունք ունենար Անառեն, թէ որ գէթ Տէկ նանգամ միայն ուլոր հայ մատենագրութեան մէջ, աստուածոյ մէք իբր ճշմարիս Աստուած գործածուած զբանքը. ինչ որ բնաւ իսկ չկայ:

Իր այս կարծիքը կը պաշտպանէ ըստով (էջ 571) թէ. — 1. Այս բառը՝ ճշմարիս Աստուած ընհանակութեամբ երրի ց ամբողջվին չէ գրուած

մեր ձեռագրիրի մէջ, այլ տրամ պատուով...», արդ ով ըստ թէ այդ սպազրուած մէզ ասսուածոյ պէտք ենք կարդալ և ոչ աստութիւն: Մանաւանդ թէ — 2. Նոյն բառին (էջ 572) «յոգնակի հողաբերը, ... չաստուածոյ, անաստուածի ևն մերը», կ'ապանզեն թէ այն համառու գրութիւնը՝ աստուածոյ կարդալի է և ոչ աստութիւնը: Որոյ կը յաելու (էջ 572) — 3. Հայերէնի ընդհանուր ձայնափիլութեան օրէնքները (-ո՞ր օրէնքը), ցոյց են տալիս թէ հին հայերէնի մէջ, աստուեց ձեռվ մի բառ չէր կարող առօտք թիւն ունենալ, և թէ Աստուած ԱՄէՅ հւանափոխութիւնը էլ հողաբուժմ էր աստուածոյ, աստուածով» են: — Այս է իր ամբողջ պատճառաբանութիւնը:

Այլ, յարգանօր ըստած ըլլամ, չարաչար կը սիսաի Պ. Անառենի:

Նախ Աստուած բառին սեռականը, ամէն իւմաստով ալ, ոչ միշտ պատուով կը գրուի, ինչպէս ինքը կարծէ (էջ 571), այլ «մեր ձեռագրեում կան արգէն մի բանի դէպիքը, (շատ, շատ), որոնք [իր բառին] հակառակ են, այսպէս իշմանանիք թէ. 526 ձեռագրի մասպաղթեայ պահանակում» գտնում ենք աստուածոյն ամբողջական գրութիւնը: Կրկնազիր Ազաթանգեղոսում՝ էջ 522ը գրուած է աստուածոյ, — ուժոցը»: ա. Ան. Արմտ. բառ. էջ 572:

Ուրեմն, աստուած ձեռվ գոյութիւն ունի հայերէնի մէջ, և բերած վկացութիւններով՝ ինքնիրեն կը հակասէ, և քանի մը տող առաջ իբր սույոց պաշտպանածը՝ առնում ենք աստուածոյն ամբողջական գրութիւնը: Կրկնազիր Ազաթանգեղոսում՝ էջ 522ը գրուած է աստուածոյ, — ուժոցը»:

Նոյնպէս, Պ. Անառենի «միշտ պատուով» գրուած է բանկու համար, պէտք էր ձեռագրաց զէթ մն մաս մը կարդացած ըլլամ. մինչ ընդհական, անոնք որ կեանքեննին ձեռագրիներով մաշեցուցած են՝ Աստուած և աստուածոյ բառերուն միջն զանազանութիւն մը հանչցած են մեր լեզուին մէջ: Եւ արդարի.

Բոլորվին սխալ է թէ ձեռագրիները միշտ պատուով կը գրեն Աստուած բառը: Ըստած կը հաստանեմ ձեռագրաց իսկ վկացութեամբ: Բոլոր ձեռագրիները կարդալ անկարելի է, և ամէն վկացութիւնը մէջ բերել՝ տաղտկալի. ուստի ես

1. Հակասութիւնէ պատեհու համար, չի կրնար տուածի թէ յէշած մէկը սուս աստուածի համար ըստու են, որովհետ սոյն պարզային, աստուածոյ մէկին յակամայ կամաւ աւելի զնդիցէկ փաստ մը կ'ընծայէր, և պիտի սահպուէր ընդունիլ թէ աստուած բառն ամէն

իմաստով ալ, առա աստուածոյ կ'ըլլայ, ինչ որ, գարենքը, իր պաշտպանածին (էջ 572) բուրովին հակառակ է: Կ'ըսեմ պիտի սահպուէր, որովհետ բերած օրինակները՝ միայն աստուած ձեռվ են և ոչ աստուածոյ:

կընտրեմ անոնցմէ միայն լրսը, և իւրաքանչիւրեն նոյնքան վկայութիւն։

Առաջինն է վանքին ձեռագրատան Զ, բ, թի 353, գդ գարուն. — Բ. Զ, բ, թի 154, գդ գարուն. — Գը. Ե, բ, թի 341, գդ գարուն. — Դը. Զ, բ, թի 366 (Հնազիր) գդ-ժ՛ գարուն։ Արդ ասոնք ամէնքն ալ խնդրական բառն ամբողջապէս կը գրեն՝ առանց սղագրութեան. այսպէս Ալ Կ'ռսէ «յԱստուծյա փրկչէն», «տաճար Աստուծյա», Բանգ Աստրած», «կենանար Աստրած» ևն։ Երկրորդը նոյնպէս ունի «Աստրած հարցն մերոց», «Հոգութիւն Աստուծյա», «Աստրած հարցն», «Աստեալք Աստուծյա» ևն։ Երրորդը, «Գառն Աստուծյա»։ «Աստրած հարցն», «Արեամբ զարին Աստուծյա», «Անսկիզին Աստրած» ևն։ Չորրորդը վերջապէս, «Ողորման մեջ Աստրած», «Զապրասմբեալն յԱստուծյա», «ԶԱստրած տէր», «փառաւքն Աստուծյա» ևն ևն։ Եւ ասոնք ամբողջ ոչ էթէ Պ. Անտոնեանի պէս «մազաղաթեայ պահպանակում» (եմ) գտնում։, այլ բուն իսկ մագաղաթեայ ձեռագրաց խորեում։

Մէջ բերած վկայութիւններէս կը հետեւ, ոչ միայն թէ Աստուծյա ձեզ շատ ծախօթ և օրինաւոր է, այլ նաև թէ հայերէն բուն ուղիղ և էին նոլպի է. և երկրորդ թէ ԱՅ սղագրութիւնը՝ միայն Աստուծյա պէտք է կարդալ, և ուրիշ ձև մի բան։ Բաց առէկ, մի և նոյն բառըց, ուր ձեռագրաց մին պատուվ գրած է, ուրիշ մը (նոյն գարուն) Աստուծյա կը գրէ։ Ուրեմն, նախնաց սա համառուտագրութիւնը ԱՅ (պատուվ), նախնիք՝ միշտ Աստուծյա կարդացեր են և ոչ երբեք ասուուծոյց¹։

Բայց գեռ աւելին կայ. Պ. Անտոնեան ԱՅ (պատուվ) Կ'ուզէ ասուուծոյց կարդալք, շատ լաւ. այն ասեն աս միւս ձեզ՝ ատոյ (պատուվ)՝ որ ձեռագրաց մէջ յանափ կը գործածուի՛ բնշապէս պէտք ենք կարդալ Կ'երկի մեր բանասէրը կամ այդ երկրորդ ձերի գեռ կանքին մէջ բնաւ չէ հանդիպած, և կամ թէ որ հանդիպեր չէ։։ Ախալ է »ըսելը (էջ 571) շատ դիւրին է։

Բացարքենք ու անցնինք։

Նախնիք Աստուծյա գրելու համար՝ այ կը

գրէին՝ վրան պատի մը զնելով իսկ աստուածոյ ըսելու համար ածոյ կը գրէին վրան նոյն պէս նշան մը գծելով։ Առաջին ձեզ՝ սովորաբար հմարիտ Աստուած նշանակելու համար կը գործածէին, երբեմն ալ՝ (բայց թէ անզամ)՝ շատ աստուածները։ Իսկ երկրորդ ձեզ՝ սովորածոյ՝ մի միայն և բացարձակ կանոնվ սուտ աստուածներու համար վերապահուած էր։ Այս վերջին ձերին յոդ, սեռականը՝ կամ ամբողջական բառը կը գրէին, աստուածոց, և կամ տօնց՝ (պատուվ)։ Իսկ առաջին ձերին յոդ, սեռ. միշտ ամբողջական բառը կը գրէին՝ աստուուցոց, և ասոր համառու մը չկայ Յոզնակի ձերը՝ միշտ սուտ աստուածներու համար են, քանի որ ճմարիտ Կոտուած մի միայն է։

Չածս կը հաստատեն բոլոր ձեռագիրները, որոնցմէ, պարզապէս ընթերցողիս ձանձրանալի չըլլալու համար, միայն երկու աստուածալունշներ կ'ընտրեմ, և կը շատանամ իւրաքանչիւրէն միայն 4-5 վկայութիւն բերելով։ Առաջինն է վանքին ձեռագրատան Զ, Ե, թի 1007, և Երկրորդը՝ Ա, Ե, թի 935, երկութիւն ալ մի գարուն։ Արդ երկութիւն ալ Ա. Գրիգ հետևեալ խօսքին այսպէս ունին Ել. ԻՒ, 13. Ածոց (պատուվ միշտ) աւտարաց», Ել. ԼՒ, 14. Ածոց աւտարաց», Բ. Օրէնք, Զ, 14 «Զհես Ածոց աւտարաց», «Ածոց ազգացն», Սազ. ԽԹ, 1 «Աստուած աստուուցոց», Դանիէլ, Գ, 90 «Ալրհնեցք զԱստուածն աստուուցոց» ևն. Նոյն վկայութիւններն միւս աստուածայունչ ձեռագիրն ունի. Ել. ԻՒ, 13, «Ածոց օտարաց», Ել. ԼՒ, 14, «Աստուածոց օտարաց» և «Ածոց նոյնաց», Բ. Օրէնք, Զ, 14 «Աստուածոց» և «Աստուածոց ազգաց», Սազ. ԽԹ, 1, «Աստուած աստուուցոց», Դանիէլ, Գ, 90 «Օթհնեցք զԱստուածն աստուուցոց», ուրիշ ձեռագիր մ'ալ, Սազ. Զ, 14 «մի երկիր պագանիցն զու ԱՅ = աստուուցոց օտարիք» ևն ևն։

Վկայութիւններէս կը հետեւ որ աստուածոյ ըսելու համար, նախնիք ԽՈՅ (պատուվ) կը գրէին, և ոչ ԱՅ. և երկրորդ թէ աստուածոյ ձեզ՝ միայն սուտ աստուածներու վերապահուած էր և ոչ երբեք նշանիտ Աստուծյա համար գոր-

1. Ծառ գտուար է այս բառն ամբողջական ձեռվ գտնել, բանի որ համառու ձեզ գրողն զիւրութիւն մ'էր, մինչ ամբողջականը՝ թէ ժամանակի կորուս, և թէ ամէի առէ կը զրաւէր մազաղաթին գրայ. Այսպէս զրուս ճն նաև «Եթուսուս» «Քրիստոս» «Սորոյ» «Վան» ևն. ասոնց ամենուն ալ ամբողջական զրու-

ծածուած, ընդունմ Պ. Հ. Աճուր Արմա. բառ. էջ 572ի մէջ ըստին:

Ուրիշն Հ. Արսէն Բագրատունոյն (Զարգց. էջ 24, թ. 49) Աստուծոյ և աստուածոյ բառներու միջև ըրած զանազանոթիւնն ամենածիշտ է:

Խնդրոյս նկատմամբ Հ. Ա. Աւետիսինակ և Հանդ. Ամս.ի (1907) մէջ ունի գրութիւն մը, զոր Պ. Աճու. (էջ 579) «Մի ձանձրանալի յօդուած» կ'անուանէ, որովհետ գրեթէ իր գրածին չափ ընդարձակ է, բատին ծագման մասին յիշած այլնայլ կարծիքներուն հետ իրենն ալ արդար գործացուցիչ լուծում մը չի տար: Աստուծ բատին հորդման նկատմամբ՝ կը մերժէ անոնց կարծիքը (Meillet, Karst, Hübschmann ևն) որ Ասուուծոյ ձեզ ընտիր չեն համարիր, բայց առանց համոզի փաստ մը, առանց բաւական պատճառ մը տալու, այլ միայն կը մերժէ:

Պ. Աճունան իր այդ գիւտին մէկ մասը՝ անուանի ուսուցչապես Պ. Մատին կը պարու (էջ 579) և միւսը (էջ 573) Պ. Մէլետի (Meillet): Պարծանք է արդար Ազգիս՝ որ այսպիսի տաղանդաւոր և կորովամիտ գիտնականաց սէրն և ուշագրութիւնը կը վայելէ: Կը յարգեմ երկուովն ալ իրենց լեզուարանական բամահմուտ հետազոտութեանց մէջ, սակայն իրենց ազնիւ և երրուամտութեան հանդիպելու յուսով՝ պիտի համարձակէի բաելու, որ՝ օտարազգի մը նրան ալ մեր լեզուն սորվի, չի կրնար անոր հայու պէտ սիրանալ և անոր մէջը թափանցիլ, պիտի զըստնուին միշտ բառեր և ոճեր՝ որդ օտարին համար մի մի զաղունիք են, մի մի խորհուրդ և կամ մի մի անլուծանելի առեղծուածներ և...»:

Հ. Գրիգոր Մարտոս

1. Կոնիքիր հայագէտ Անդրեացայն Մաշտոցի թարգ. մանութիւնը կարդացողն իւսոյն կը համոզիվ ըստին: Ուրիշ ճիշեր, ուշափ արամարանութիւն թափեր է և ասնի էջեր չեցուցեիք է հանգուցն Հայութը, տուցնելու համար թէ Հայը կի՞ առեն վերափոխման տօնը՝ ոչ թէ Ա. Կուռին ի պատի կը հասարէի, այլ Քիմստոսի մարդուութեան՝ ծննդան ի պատի: Եւ այս որովհեան Հայոց Մաշտոցը այս առնին անունը ԱՍՏՈՒԱՆԱՆԻՆ կը դրէ...: Արդ ո՛ր Հայը կ'անդամանյ թէ մենք պարզապէտ Աստուածանին բակեով՝ արշէն Աստուածանին ամենածծ աօնախմբութիւնը, վերափոխման կը հասկանած...: Եւ այսպէտ, յարդէով միշտ բացառութիւնը, «աս առ ճուղե օմքնե»:

Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն.

ՍՈՓՈԿԼԵՍ

ԻԴԻՊՈՍ ԹԱԳԱԻՈՐ

(Եար. տես թագմ. 1927, էջ 384)

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՐՄՐՈՒԱԾ

ԳՈՒԺԿԱՅՆ, ԳԱՐ, ԻԴԻՊՈՍ, ԿՐԵՈՆ

ԳՈՒԺԿԱՅՆ

Ո՞վ գուք, որ այս երկրին մէջ միշտ էք յարգուած, Ո՞ն, ի՞նչ բաներ պիտի լըսէք ու տեսնէք, Եւ ի՞նչ սուլոզ պիտի համակուիք, եթէ դուք Դու փոյթ ու խնամ ունիք՝ ինչպէս կը վայլէ Հայրենակցաց՝ Լարդակոսի տան վըրայ:

Զի կը կառծնմ թէ ոչ խստրու, ոչ ֆասիս

Պիտի կրնան լըսալ այս յարկի ու մաքրել

Պղծութենէն՝ զոր իր ծոցին մէջ ունի:

Եւ շուա չարիքն ի լոյս պիտի պարզը: Իւ ակամայ՝ այլ կամաւորւ: Եւ լրկայ

Անքան ահեղ չարիք՝ որբան կամաւորն:

ԳԱՐ

Գիշ ողբարի չէին մեր նախ զիտացաներն:

Անոնցմէ դուրս ի՞նչ պիտի 'սես դուն մեզի:

ԳՈՒԺԿԱՅՆ

Միապէս ծանըը եւ ըսելն եւ լըսելն.

Աստուածազարմ Յոկաստէն ոչ եւըս է:

ԳԱՐ:

Չըւառուհիք. եւ հեղինակը ով է:

ԳՈՒԺԿԱՅՆ

Նէ անձնասպան եղաւ, բայց պինտ ցաւագինն նշանաներէն ձևնէ ծածուկ կը մընայ,

Զի անսութիւնը կը պակսի: Բայց իմ մէջն եթէ մընաց յիշողութիւն ըսուած բան,

Պիտի լըսես եղկելիին տանջանքներն:

Երբոր անցաւ նէ գաւիթէն զայրազին,

Եիսակ զընաց հարսանեկան առագաստն,

Զոյգ ձեռքերովը նողելով իր մազերն:

Եւ մանելով զուր վակեց ներէն պինդ:

Ու կը կանչէ Լայոսը՝ վաղ իսկ մնած,

Ցիշով կին ամուսնութիւնն՝ որ տըւաւ

Որդի մ' իրեն որ պիտի հայրն ըսպաննէր,